

## ԿԱՆՈՆՆԵՐ

### «Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԲԱՆԲԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում են «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի (այսուհետ՝ «Բանբեր») հրատարակչական բարեվարքության կանոնները, որոնց պարտավոր են հետևել ինչպես հեղինակները և գրախոսները, այնպես էլ «Բանբերի» խմբագրությունը (այսուհետ՝ խմբագրություն):
2. «Բանբերի» խմբագրությունը սահմանում է հրատարակվող հոդվածների գիտական բարեվարքության սկզբունքները, որոնց հիմքում ընկած են՝ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) «Գրագողության դեպքերի վերհանման և կանխարգելման ուղենիշները» (<https://www.bok.am/node/11852>) և Հրատարակման էթիկայի հանձնաժողովի (Committee on Publication Ethics (COPE) գիտական հետազոտությունների հրատարակման համար ընդունված միջազգային չափանիշները (<https://publicationethics.org/guidance>):

#### II. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3. «Բանբերի» խմբագրություն հրատարակության հանձնված հոդվածը պետք է ունենա գիտական նորոյթ և արդիականություն, համապատասխանի **«Բանբերի» հոդվածներին ներկայացվող պահանջներին:**
4. Հեղինակը, ստորագրելով **«Տեղեկացման թերթիկը»**, գրավոր երաշխավորում է, որ ծանոթացել է սույն ուղեցույցի կանոններին և «Բանբերի» հոդվածներին ներկայացվող պահանջներին, ինչպես նաև, որ հրատարակության հանձնված հոդվածը նախկինում չի հրատարակվել կամ այլ տեղ ներկայացված չէ հրատարակության՝ էլեկտրոնային և (կամ) տպագիր ձևաչափով:
5. Խմբագրությունն անընդունելի է համարում հրատարակչական բարեվարքության խախտման դրսևորումները, մասնավորապես՝ գրագողությունը, ինքնագրագողությունը, այլ գիտական հետազոտությունների արդյունքների յուրացումը կամ տվյալների կեղծումը և գիտական բարեվարքության խախտման այլ դեպքերը:
6. Խմբագրություն հրատարակության հանձնված հոդվածում հեղինակը պետք է լիարժեք հղում կատարի սկզբնաղբյուրներին: Հեղինակը չի կարող օգտագործել այլ հեղինակ(ներ)ի

աշխատանքի տեքստի առանձին հատվածներ (նկար, գծապատկեր, աղյուսակ), բառացի մեջբերումներ, վերծանումներ կամ բառափոխված տարբերակներ՝ առանց դրանց հղում կատարելու:

7. Սույն ուղեցույցով սահմանված 5-րդ և 6-րդ կետերից շեղումներ հայտնաբերելու դեպքում, Խմբագրությունն իրավունք ունի մերժել ներկայացված հոդվածի հրատարակումը:
8. Խմբագրության կողմից առաջարկվող փոփոխությունները մերժելու, գրախոսության դիտողությունների շուրջ փոխհամաձայնության չգալու դեպքում՝ հեղինակն իրավունք ունի հրաժարվելու հոդվածի հրատարակությունից:
9. Հոդվածի մերժման մասին Խմբագրական կազմի որոշմանը, ինչպես նաև հոդվածի վերաբերյալ արված առաջարկություններին և դիտողություններին Հեղինակ(ներ)ի գրավոր անհամաձայնության դեպքում Հոդվածի հրատարակման հարցը քննարկվում է Խմբագրական խորհրդում:
10. Հոդվածի հրատարակման մերժման մասին որոշումը Խմբագրական խորհրդի կողմից վերահաստատելու դեպքում Հոդվածը չի հրատարակվում:

### **III. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

1. Խմբագրությունը պարտավոր է կազմակերպել ընդունված հոդվածի պատշաճ փորձաքննություն և գրախոսություն, որի նպատակն է պարզել և հիմնավորել աշխատանքի ինքնօրինակությունը, գիտական նորոպը և արդիականությունը, օգտագործված աղբյուրների համապատասխանությունը:
2. «Բանբերի» մասնագիտական ուղղվածությանը և հրատարակչական բարեվարքության կանոններին, ինչպես նաև «Բանբերի» հոդվածներին ներկայացվող պահանջներին էապես չհամապատասխանող հոդվածը մերժվում է Խմբագրության կողմից, որի մասին հեղինակն իրազեկվում է հոդվածների ներկայացման վերջնաժամկետից հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Խմբագրության կողմից հոդվածի ընդունումը չի ենթադրում դրա անվերապահ հրատարակումը և ենթակա է առնվազն մեկ կույր գրախոսության:
4. Խմբագրության անդամներն իրավունք չունեն այլ անձանց տեղեկություններ հայտնել ընդունված կամ մերժված հոդվածի մասին, պարտավորվում են չհրապարակել հեղինակ(ներ)ի և գրախոս(ներ)ի անձնական տվյալները, գրախոսության արդյունքները, չօգտագործել դրանցում տեղ գտած տվյալները:

5. Հողվածի գրախոսությունը ստանալուց հետո Խմբագրությունը հեղինակին իրազեկում է հողվածի ընդունման կամ մերժման, ինչպես նաև հրատարակության մոտավոր ժամկետների վերաբերյալ:
6. Գրախոսման արդյունքում հողվածում բովանդակային ճշգրտումներ և լրացումներ կատարելու անհրաժեշտության դեպքում Խմբագրությունը հողվածը վերադարձնում է հեղինակին՝ լրամշակման: Խմբագրության կողմից սահմանված ժամկետում հեղինակը պարտավոր է կատարել փոփոխություններն ու լրացումները և (կամ) գրավոր պատասխանել դիտողություններին:
7. Հողվածի մերժման մասին Խմբագրության որոշմանը, ինչպես նաև հողվածի վերաբերյալ գրախոսության մեջ արված առաջարկություններին և դիտողություններին հեղինակի գրավոր անհամաձայնության դեպքում հողվածի հրատարակման հարցը քննարկվում է «Բանբերի» Խմբագրական խորհրդում: Եթե Խմբագրական խորհուրդը վերահաստատում է հողվածի մերժման որոշումը՝ հողվածը չի հրատարակվում:
8. Մերժված հողվածները և ներկայացված փաստաթղթերը հեղինակին չեն վերադարձվում:

#### **IV. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԳՐԱԽՈՍԻ ՀԱՄԱՐ**

9. Գրախոսությունը իրականացվում է գիտական աստիճան ունեցող համապատասխան մասնագետի կողմից:
10. Գրախոս չի կարող լինել Հեղինակի գիտական ղեկավարը, տվյալ աշխատանքի համահեղինակը և նրա հետ փոխկապակցված անձինք:
11. Գրախոսությունը պետք է ներկայացվի Խմբագրության կողմից սահմանված ձևանմուշի պահանջներին համապատասխան:
12. Գրախոսի կարծիքը պետք է լինի գիտականորեն փաստարկված և անկողմնակալ, ներկայացնի փորձագիտական գնահատական ուսումնասիրության գիտական նորույթի մասին, թեմայի արդիականության, հետազոտական մեթոդ(ներ)ի, ստացված արդյունքների, ինչպես նաև հաստատի օգտագործված աղբյուրների և գրականության համապատասխանությունը հողվածի բովանդակությանն ու ուսումնասիրության առարկային:
13. Գրախոսի և հեղինակի անունները կողմերի համար մնում են գաղտնի:
14. Գրախոսությունը գաղտնի փաստաթուղթ է և չի կարող հանրայնացվել: